

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

«07» « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրենի «29» « 12 » 2016 թ.

թիվ 496 հրամանով



**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ»**

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հեռակա ուսուցման բովանդակությունը որոշվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով:

1.2 Հեռակա կրթության հիմնական նպատակներն են.

ա/ հիմնական աշխատանքից չկտրված և առկա ուսուցմամբ կրթություն ստանալու հնարավորություն չունեցող անձանց կրթական պահանջների բավարարումը,

բ/ կրթական ծառայությունների մատուցման ոլորտի ընդլայնումը ՀՀ հեռավոր շրջաններում և արտերկրում բնակվող անձանց համար:

II ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Հեռակա ուսուցմամբ միջին մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունեն բարձրագույն, միջին մասնագիտական, նախնական /արհեստագործական/ մասնագիտական, տեխնիկական մասնագիտական և միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց տարիքային սահմանափակման:

2.2 Հեռակա ուսուցման ընդունելությունը կազմակերպելու և անցկացնելու համար յուրաքանչյուր տարի կազմվում է ընդունող հանձնաժողով:

2.3 Հեռակա ուսուցմամբ սովորելու համար դիմորդները անցնում են հարցազրույց:

2.4 Հարցազրույցի արդյունքների հիման վրա դիմորդների պաշտոնական ցուցակները հանձնվում են տնօրենին՝ հրամանագրման համար:

2.5 Հրամանագրված ուսնողների պայմանագիր են կնքում քոլեջի հետ:

2.6 Քոլեջում հեռակա ուսուցումը վճարովի է բացի ՀՀ օրենքներով նախատեսված արտոնություններից օգտվող ուսանողների:

III ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Հեռակա ուսուցմամբ միջին մասնագիտական կրթական ծրագրերի յուրացման նորմատիվային ժամկետները սահմանվում են յուրաքանչյուր մասնագիտության համապատասխան որակավորման աստիճանի պետական կրթական չափորոշիչներով /ըստ կրթական ծրագրերի առկա ուսուցման նորմատիվային ժամկետից կեսից մինչև 1 տարով ավելի/:

3.2 Հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացը կազմակերպվում է համաձայն ուսումնական պլանի և ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

3.3 Հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի ուսումնական պլանը կազմվում է առկա ուսուցման օրինակելի ուսումնական պլանի հիման վրա՝ պահպանելով հետևյալ պայմանը. առկա ուսուցման ծավալը յուրաքանչյուր տարում ոչ պակաս 160 ժամից:

3.4 Հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի ժամանակացույցը կազմվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ ուսումնական պլանի հիման վրա: Նրանում նշվում են ուսումնասիրվող առարկաները, յուրաքանչյուր առարկային հատկացված լսարանային ժամաքանակը և ստուգման ձևը:

3.5 Հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի ուսումնական պլանը և ժամանակացույցը հաստատվում է քոլեջի տնօրենի կողմից:

3.6 Քննաշրջանների պարապմունքները անցկացվում են ուսումնական գործընթացի ժամանակացույցի հիման վրա կազմված /մինչև 5 շաբաթ ընդհանուր տևողությամբ/ դասացուցակներով, որոնք հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից:

3.7 Քննաշրջանի պարապմունքները ավարտվում են կիսամյակային ստուգարքների և քննությունների հանձնմամբ:

3.8 Յուրաքանչյուր կիսամյակից առաջ ուսանողներին ուղարկվում է սահմանված ձևի տեղեկանք-կանչ:

3.9 Հեռակայող ուսանողի ինքնուրույն աշխատանքի հիմնական մասը գրավոր /ստուգողական/ աշխատանքի կատարումն է: Գրավոր աշխատանքները, համաձայն ուսումնական պլանի, նախատեսված են յուրաքանչյուր կիսամյակի համար: Յուրաքանչյուր ուսանողին տրվում է անհատական ժամանակացույց, որում նշվում են առարկաների անվանումները, գրավոր աշխատանքների քանակը, դրանց ներկայացման ժամկետները, ստուգման ձևերը:

3.10 Սահմանված ժամկետներում գրավոր աշխատանքները չներկայացրած ուսանողները դրանք ներկայացնում են կիսամյակի առաջին օրը:

3.11 Գրավոր աշխատանքները քոլեջի համապատասխան ամբիոններում ենթարկվում են գրախոսման և նախնական գնահատման: Վերջնական գնահատականը դրվում է գրավոր աշխատանքի բովանդակության վերաբերյալ ուսանողի հետ դասախոսի կողմից անցկացվող հարցազրույցից հետո:

3.12 Բացասական գրախոսված գրավոր աշխատանքները վերադրվում են լրամշակման և կրկնակի ներկայացման:

3.13 Քննաշրջանին մասնակցել թույլատրվում են այն ուսանողները, ովքեր հանձնել են տվյալ կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բոլոր բաղկացուցիչները:

3.14 Նույն առարկայից երեք անգամ կամ նույն քննաշրջանում երեք առարկաներից անբավարար գնահատական ստանալու դեպքում ուսանողը հեռացվում է քոլեջից:

IV ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱՄԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4.1 Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն ուսանողները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական պլանով նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները:

4.2 Ամփոփիչ ատեստավորման ենթակա ուսանողների ցանկը հաստատվում է քոլեջի տնօրենի հրամանով՝ հեռակա բաժնի վարիչի ներկայացմամբ:

4.3 Ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում և անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ՀՀ ԿԳՆ սահմանված կարգով:

4.4 Ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ ամցած շրջանավարտներին տրվում է սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ /ղիպլոմ/ և համապատասխան ներդիր:

4.5 Ամփոփիչ ատեստավորումը չանցած կամ ուսումը ընդհատած ուսանողներին, իրենց ցանկությամբ, տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք: